ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
վարկային պայմանագրի օրինակում դրույթներ ներառելով

ԲԱԺԻՆ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

9.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը Կողմերը համաձայնվում են լուծել՝ Արբիտրաժի կամ ՀՀ դատարանի միջոցով համաձայն Պայմանագրի 9.4 կետի:

9.2. Կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության այն մասին, որ Պայմանագրի շուրջ ծագած վեճերի լուծումը Պայմանագրի 9.4 կետի համաձայն կարող են ներկայացնել Հայաստանի Բանկերի Միության «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ» հիմնարկին, այսուհետ՝ «Հիմնարկ», որում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հիմնարկի կանոնադրությանը և ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին համապատասխան:

Հիմնարկի կանոնադրությունը և ֆինանսական արբիտրաժի կանոնակարգը տեղակայված են Հայաստանի Բանկերի Միության պաշտոնական ինտերնետային www.uba.am կայքէջում:

Կողմերը սահմանում են, որ արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Հայաստանի Բանկերի Միության ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին համապատասխան:

Կողմերը պայմանավորվում են, որ վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման:

Վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Կորյունի փողոց, 19ա շենք, 6-րդ հարկ»:

Կողմերը հաստատում են, որ ծանոթացել են Հիմնարկի կողմից վեճի քննության համար նախատեսված Կողմերի իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը:

9.3. Կողմերը Պայմանագրի շուրջ ծագած վեճերի լուծումը Պայմանագրի 9.4 կետի համաձայն կարող են ներկայացնել ՀՀ դատարանին և համաձայն են, որ այդ գործերի քննությունը իրականացվի Բանկի Ծանուցման փոստային հասցեի գտնվելու վայրին ընդդատյա ՀՀ դատարանի կողմից կամ Բանկի ընտրությամբ Վարկառուի Ծանուցման փոստային հասցեի գտնվելու վայրին ընդդատյա ՀՀ դատարանի կողմից (բացառությամբ օրենքով համապատասխան վեճի լուծումը ՀՀ այլ դատարանի պարտադիր ընդդատություն սահմանվելու դեպքերի):Կողմերը համաձայնվում են նաև Պայմանագրի շուրջ ծագած վեճերով, այդ թվում՝ Պայմանագրի խախտման/չկատարման հետ կապված պահանջներով, գործերը քննվեն ՀՀ դատարանի կողմից պարզեցված վարույթի կարգով:

9.4. Եթե Պայմանագրի շուրջ ծագած վեճերի լուծումը կողմը ներկայացրել է Հիմնարկին և մյուս կողմը մինչև Հիմնարկի կողմից գործի քննությունը սկսելը (մինչև վեճի վերաբերյալ այդ կողմի առաջին դիքորոշումը ներկայացնելու համար Հիմնարկի սահմանած ժամկետի ավարտը) հատուցում է վեճի լուծումը Հիմնարկին ներկայացնող Կողմի կատարած (կատարելիք) պարտադիր ծախսերը (արբիտրաժային վճարներ և այլ) և պահանջում է վեճի լուծումը հանձնել ՀՀ դատարանի քննությանը, ապա այդ դեպքում վեճը ենթակա է քննության ՀՀ դատարանի կողմից՝ Պայմանագրի 9.3 կետի համաձայն, հակառակ դեպքում՝ վեճը ենթակա է քննության Հիմնարկի կողմից Պայմանագրի 9.2 կետի համաձայն: Եթե կողմը վեճի լուծումը ներկայացրել է ՀՀ դատարանին և մյուս կողմը մինչև ՀՀ դատարանի կողմից գործի քննությունը սկսելը (մինչև վեճի վերաբերյալ այդ կողմի առաջին դիքորոշումը ներկայացնելու համար ՀՀ դատավարական օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտը) հատուցում է վեճի լուծումը ՀՀ դատարանին ներկայացնող Կողմի կատարած (կատարելիք) պարտադիր ծախսերը (պետական տուրք և այլ) և պահանջում է վեճի լուծումը հանձնել Հիմնարկի քննությանը, ապա այդ դեպքում վեճը ենթակա է քննության Հիմնարկի կողմից՝ Պայմանագրի 9.2 կետի համաձայն, հակառակ դեպքում՝ վեճը ենթակա է քննության ՀՀ դատարանի կողմից Պայմանագրի 9.3 կետի համաձայն: